

ՊԱՏԵՐԱԿ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
(2 քիւ մեկ ծրարով)
Տարեկան 14 ֆր.
վեցամսեայ 7 ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տր.
վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

—o—

Մանուգան տղր
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Ց Ի

Rédaction du journal

„Iraouvunk“

PARIS (Bulgarie)

—o—

Редакция
на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

—o—

Գրութիւնք եւ
չիւն տրուիր

ԶԵՆՈՅՑ

Այն բաժանորդները, որոնք մեր ճամբորդութեան առեւն միջոց չունենցան վճարելու, իրենց պարտքը ու խոստացանքները մեր օր յետոյ չըրկելով, հաճին խոստումնին անյապաղ կատարել, եթէ չեն ուղեր որ հրապարակաւ իրենցմէ պահանջենք: Նոյնը կ'ազդարարենք նաեւ մեր Ռուսմանիայ եւ բոլոր արտասահմանի բաժանորդներուն որոնց արգէն երկտող զեկոյցներ զրկած ենք:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

(Մեր մասնաւոր քրթակցին)

Սօֆիա 28 Մայիս

Մակեդոնացի յեղափոխականներու դասը. — Մամուլը մեր օրէիքը. — Պոլիսիոյ նախնական թափառումը. — Մեկայողութիւն, պաշտօնի ջնջում եւ քաշակի գեղը. — Փոխադրութիւն Ռուսիայէ եւ այլեւորքիւն: — Ռուսիայէ գիւղացիները սահմանագիծին վրայ, Ազգային տոբի եւ փոքի խնդիր:

Իրեն թղթակցի կը պարտէի օրը օրին գրել, սակայն ռուսաւորքի 15 օրեայ դադարը, միւս կողմէն խնդրոյն կարեւորութիւնը բացառաբար պարտք մը դրին վրաս, որ ազատական նախարարութեան դատի ենթարկուածը գրէի եւ փութացնէի նախորդեալ, բայց աւելորդ չեմ համարիր գրել ինչ որ անցան դարձան, թէեւ շատ համոզող որպէսզի ստուշեալու դարձեալ ըստ առաջնայն կարենամ շարունակել:

Սարաֆովի եւ ընկերաց հարցաքննիչ դատարանը, որ Ռուսմանիայի դատարանէն հոն գտնուած կարգ մը վկաններու եւ իրազեկներու բացատրութիւններն լսելու եւ ըստ կարելոյն Ռուսմանիայ կողմը սահմանագիծին վրայ գտնուող վկաններն ալ հարցաքննելու համար, Կիւրեի թէ քիչ թէ շատ բան հասկըցած վերադարձաւ եւ երկու օր ետքը նորէն հարցաքննիչ եւ ձեռքը գրտնուած նամակներն ալ ճշդելու համար Կիւրեի (փորձաւոր դատարան) մը յանձնած է, որ շատ գաղտնի կը գործէ այժմ, թէեւ օր պիտի գայ անշուշտ որ մենք ալ պիտի իմանանք: Կը մնայ միայն Պուրէի կառավարութիւնէն դատաւարտեալները լսել գործին վրայ կատարեալ տեղեկագիր մը կամ ամբաստանագիր մը պատրաստելու համար. կարելի պիտի ըլլայ աւելայ, Ռուսմանիա պիտի հաճի՞ ասոր: Իրենք, քանի որ միջազգային օրէնք

մը չկայ առ այս եւ ոչ ալ մասնաւոր պաշտօնագրութիւն մը մեր եւ վրանեւ, որովհետեւ կարելի չպիտի լինի արդեօք, որ սոյն հարցաքննութիւն տեղի ունենայ նոյն իսկ բանտին մէջ ի ներկայութեան ուսմէն հարցաքննիչ դատարանի մը, չեմ կարծիր. հետեւաբար խնդիրը պիտի կայանայ ցարդ լուծած մարդը վկայութեանց, բացառութեանց եւ գրաւուած թղթերու վրայ. իսկ թէ ասոնք ալ պիտի բաւեն մարդիկը գտնել ենթարկելու եւ ինչ վախճան պիտի առնու գործը:

Որովհետեւ իսկզբանէ անտի ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը, որ կը գործէ այս բանին մէջ, ինչ ալ ըսուի, լսուի եւ գրուի, եւ պիտի կրնամ ազատօրէն ըսել, որ քաղաքական պարագայից համաձայն ալ պիտի քաշկռուի խնդիրը, եւ պիտի լուծուի ըստ քաղաքական պահանջմանց եւս. բայց ժողովուրդը պիտի տրանջայ, միմայ եւ ցոյցեր պիտի ընէ եղբր, արդարութեան, խղճի եւ օրինաց հակառակ է եղբր այս ընթացքը: Բոլոր հոգ, ո՞վ մտիկ կրնէ եւ ինչ արժէք ունի. «Օրէնք ի ձեռաց առաջնորդաց են»:

Քաղաքական-կուսակցական խնդիր է եւ նախ մամուլի խնդիրը, որ Սօֆիայի լինելու քուէակցի եւ իշխանի ալ վստահացուց. ըստ այսմ ազատ է մամուլը, սակայն պատասխանատու է եւ իր հրատարակութեանց համակ ալ. գրողը պիտի պատժուի, եթէ յայտնի է, յայտնի չէ՞ գրողը, հրատարակիչը պիտի պատժուի, ա՞յն ալ յայտնի չէ, ապաքանապետը պիտի պատժուի, ասոր աստիճանի մամուլի թղթակցներն ալ պատասխանատու են իրենց գրածին ըսելու, երբ յայտնի են. միայն թէ հրատարակութեանց օրէնք միջնիւ վեց ամիս միջոցի մէջ. եթէ այս միջոցը անցնի, դատէ ազատ պիտի նկատուին. պատժներն ալ ըստ պատժական օրինաց են. ահա գլխաւոր պայմանները մամուլի ազատութեան, որուն համար այնչափ գրուեցաւ ու խօսուեցաւ:

Երկրորդ՝ երկրին նահանգային բաժանումը: 1882ին Սօֆիայի երկրորդ բաժնած էր 18 նահանգի եւ 7 գաւառի արդի կառավարութիւնը 18 հաւանք 12ի իջեցուց եւ 75 դուստն ալ 65ի. խնայողութեան համար կըսուի, ի նկատի ունենալով սակայն սա սկզբունքը, որ ժողովուրդի թըւոյն համաձայն տեղի պիտի ունենար բաժանումը, զրկանք մ'է Սլովէնի նամար, որ երկրին մէջ բազմամարդուն

թեան կողմանէ չորրորդ տեղը կը ընդնէ կըսուի ու նահանգ ըլլալէ զադրեցաւ. այս յայտնի զրկանք է: Քաղաքական-կուսակցական ձգտութիւնը ջլատելու համար երեսփոխաններէ ու մանք առաջարկեցին երկրորդ միայն 7 նահանգի բաժնի ինչպէս թիւքին օրին էր, եւ այս աւելի խնայողական պիտի լինէր. սակայն ձայն բարբառոյ յանապատի:

Մեր կառավարութիւնը որ խնայողութիւն կըսէ ու կերթայ եւ տակաւին պաշտօնի չանցած կը գրէին ու կը խօսէին որ մինչեւ 15-16 միլիոն ֆրանքի խնայողութիւն կարելի պիտի ըլլայ ընել, հիմա որ գործի են եւ քաշելով ու քաշկռուելով 3 ու կէս միլիոն ֆրանքի ելեւմտից տարբերութիւն մը հազիւ կրցան գտնել կամ ընել ու կը խոստանան աշխարհ Սօֆիան ինչէն նորանոր օրէնքներ ըրելու. մեղք կը քսեն մեր չրթունքը, ինչ ըսենք ստոր. շատ պաշտօնեաներ ճան ըսեցան, միայն մայրաքաղաքի մէջ մօտիկ 10:0 հոգի, պաշտօններ ջրնջուեցան. հիմա ալ Սօֆիայի ելեւմտից մասնաժողովը կառավարկէ որ գլխաւոր պաշտօնէից ամսականն ալ 20 0/0 զեղչուի, որուն հոգով մարմինով կը հակառակի նախարարութիւնը եւ մինչեւ վստահութեան քուէի գիւնդը կամ հրատարակելու կը պահանջ գի յայտնի է թէ իրենց շահերուն կը զպչի. թէեւ միւս կողմէն ազատական նախարարութիւն մը ի դատ կը կոչուի, որովհետեւ կառավարական գանձին ի վնաս որոշումներ տուած կամ ձեռնարկներ ըրած են եղբր. . . Իսկ եթէ ընդունուի ալ այս զեղչի առաջարկութիւնը, ինչ մեծ բան պիտի չանշնք. դարձեալ ոչինչ:

Որովհետեւ ելեւմտից խնդիրը տակաւին նոր սեղանին վրայ գրուեցաւ, կը յուսամ առիթ պիտի ունենամ նորէն գրելու եւ աւելի մանրամասնօրէն:

Միայն զրոյց մը կայ, եթէ հաստատուի նախարարութիւն պիտի կրնայ մի քիչ շուշ առնուլ եւ առնուլ առայկ'ըստ ի թէ Ռուսիա պիտի հաճի 100 միլիոն ֆր. փոխառուութիւն մը ընել եթէ մերոնք ի հարկէ համակերպին Մոսկովեան քաղաքական հայեացքներուն: Վերջերս Պուրէի Ռուսիայի զեապանատան զինուորական կորորդն եկաւ քաղաք. լաւ ընդունելութիւն մեծէն ու պզտիկէն, ճաշկերպ իշխանէն եւ նշան, անտեղութիւններ զինուորական նախարարին հետ, այցիլութիւն իզօրանաց: Միջերկրական նաւատորմի ընդհանուր հրամանատարն ալ եկաւ քաղաք իւր հետեւորդներ

ըով, աւելի փայլուն ընդունելութիւն յարգանք եւ մեծարանք. այլ եթէ այս հայեացքներով 100 միլիոն չէ 200 միլիոն տայ Ռուսիա, ինչ պիտի չանի երկիրը անտեսագլխօրէն:

Պուլկարական՝ Ռուսական մեր այս մերձեցումը կարծեմ լաւ ազդեցութիւն ըրած չէ մեր գրագիտներուն վրայ եւս. Սօֆիայի կը պահանջէ, որ սահմանագիծի գիծը կամ Սերպո-Պուլկար սահմանագիծի որոշուի եւ գծուի, անհամոյց ղեկավարող առաջնաւարտն: Ռուսմանիա ալ Տօպրուճայի կողմէն զօրք կը համախմբէ սահմանագիծին վրայ եւ մեր կառավարութեան կասկած չ'տալու կամ կասկածը փարատելու համար սա բացատրութիւնը կուտայ, որ իբր թէ Պուլկարիայէն թիւքերու Տօպրուճա գաղթականութիւնը արգիլելու կողմէն եղբր ինչ ապուշ բացատրութիւն:

Մեր ազգային շրջանին մէջ ալ յուզում կայ թէեւ շատ տարբեր. մեր առժամայ թաղ. խորհուրդ Գեր. այցելու հովուէն եկած սահմանագրական կարեւոր յօդուած մը յայտարարութիւններով իմացուց ժողովրդեան որ առաջիկայ թաղականի ընտրութեան մասնակցելու համար ամեն անհատ ըստ սահմանագրութեան 90 րդ. յօդուածին կը պարտի իւր ազգային որոշեալ տուրքը վճարել. թէ ոչ պիտի գրկուի քուէարկութեան:

Եւ ո՞ր ազգի մէջ քուէարկութեան որոշ պայմաններն եւ օրէնքներն չկան: Օրէնք մի է, կենսական օրէնք. որ պէտք է գործադրել թէեւ ցարդ ոչ ոք մտածած է այս եւ այսպիսի բանաւ որ օրինաց գործադրութեան վրայ որոշ համար ալ ազգին դործեր միշտ կաղն ի կաղ պնացած են առ ի զգոյշ մամուսայի, որ ինչպէս անհատի մը նոյնպէս եւ ազգի մը գործոց մեքենային շոգին է. ուժն է, առանց անոր չկայ եւ ոչինչ, ու չըլլար:

Մեր հասարակ ժողովուրդը որ քնդհանրապէս վստայի վստածած է ի Տաճկաստան, փոխանակ համակերպելու ազգային օրէնքի մը, որուն վերայ որպէս թէ կը գուրգուրանք, շատ ցուրտ կերպով ընդունեց այս յայտարարութիւնը. չար ողիներ ալ որ ամեն առիթ օգտուի կերպով, չայրենաւէրներ ստորագրութեան ներքեւ կողմ մը յախուռն յարձակումներ կը ընեն թաղականի ամեն մի անդամի վերայ, ժողովուրդը կը յորդորեն ոտքի ելնել. զարնել զարնուիլ, ջարդուբուրդ ընել (պապամ գարբուզ մը քէ սիօրսընդ, սալահանէտէ հայվա՞ն մը փարչալայօրսընդ) իբր թէ ինքնակոչ

Թաղական մը այդ յայտարարութեամբ ազգին իրաւունքները կը կապէ, կը կաշկանդէ եղբոր, Տաճկաստան չենք եղբոր (երանի թէ լաւ հասկնային, որ արդարեւ Տաճկաստան չենք գտնուիր) եւն, եւն:

Բարեբաղդաբար չեն պակսիր մարդիկ ալ, որ այլապէս կը խորհին եւ չեն խտրուիր այլ եւս այսպիսի ստորիններէ եւ կուզեն յարգել ազգային օրէնքը:

Եւ ինչո՞ւ չյարգել, քանի որ օրինազանցութենէ առաջ կուգայ միայն չարիք եւ ոչ այլ ինչ:

Ես պիտի ըսեմ կարճ. կեցցե՛ն հայրենասէրներ, որ ժողովուրդը կ'առաջնորդեն ի բարին եւ այս միայն օրինօք զի ուր չկայ օրէնք, հոն կը տիրէ անիշխանութիւնը:

Ֆիլիպե 1901 Ապրիլ 13

Ամսոյ 17ին հինգշաբթի գիշեր տեղի ունեցաւ ինպատկ Ազգ. վարժարանաց երաժշտական երեկոյթ մը, նախաձեռնութեամբ «Արշալոյս» եւ «Դալայիկ» նորակազմ երգեցիկ երկուսն իւրմբերով, որոնք հակառակ իրենց դեռ տկար ուժերուն, բաւական յաջողութեամբ երգեցին եւրոպական լաւագոյն կատրները եւ զոհ ձգեցին հասարակութիւնը:

Երեկոյթը բացուեցաւ վարժարանաց տնօրէնին հակիրճ տեսութեամբ, որով բացառեց Եւրոպայի մէջ տաշածուած բոլորութիւն երաժշտական ընկերութիւններու նշանակութիւնը եւ լսողնք բարեբար ազդեցութիւնը:

Երգեցիկ խումբերը կառավարող Տ. Ա. Երուանդեան մեծ յաջողութեամբ երգեց առանձին Պիլզէի Քարմենը եւ Կ. Մաքսիի Նէքէ Էմիլ Դեմարը, Երկու Պրիկար եւ իրաւասարդներ ջութակ ածեցին, Տ. Մ. Շիշմանեան երգեց պուկարերէն Ժ. Քօլէնի «Մայրիցէն» եւ Յրանսերէն Ժ. Կուպլէի Քրէտո տիշ քէյզաւը: Օր. Պ. Գարուտով եւ օր. Ս. Ղուկասեան արտասանեցին ընտիր առեգանութեամբ եւ վայելուչ ձեւերով Ա. Չօպանեանի «Օրօր»ը եւ Մ. Նալպտեանեանի «Մանկութեան օրեր»ը: Միջնարարներուն Փօնօկրաֆը կը հնչեցնէր Յրանսացի ծանօթ երգիչներու երգած լաւագոյն երգերը: Հանգէտը վերջացաւ կենդանի պատկերներով, որոնք կը ներկայացնէին մարմարեայ արձան, զարմանալի նմանութիւն բերելով իսկականին:

Միայն ցաւալի կողմը սա է որ Տիկին Բերրոնէ Ա. Թամիրեանց, որ իրեն զանազան հար իր մասնակցութիւնը խոստացած էր այս հանգէտին եւ ըստ այնմ իր անունը քօկրամի մէջ անցած. վերջին ժամուն, հանգէտը սկսելէն կէս ժամ առաջ, մերժած է պալ, պատրուակելով թէ հիւանդ է եւ թէ չի կրնար ազգին համար իր կեանքը վտանգի («) անարկել («) Բարեբաղդաբար վէճելով թատերախումբ:

(*) Թէեւ այս ընթացքը հանգէտին արգելք լինելու արժանի դիտուումով ծանօթ լիբերալ սարքած մէկ դասն է:

Բին դիմելով, սա ամենայն սիրով առանց փոխարինութեան փոխադրելով իւր երեկոյ խմբին գաշտակահար իտալացի Տ. Ֆ. Թոգի, որ դիմելով քանի մը ընտիր կտորներ ածեց եւ այժմեացու բուն ծափահարութեանց եւ փնջի մը որ յատկացուած էր հայ դաշնակահարին:

Խորին շնորհակալութիւն երկու Պրիկար երիտասարդներուն եւ ինչեւ իտալացի տիկնոջ, որոնք յօժար կամօք մասնակցեցան ինչ պատահալ վարժարաններու տրրուած հանգէտին լիւրջ գոցելով ազգին համար կեանքը վտանգի չի դնող հայ տիկնոջ մը մասնակցութեան պակասը:

Մասնաւոր շնորհակալութեան եւ գովաստան արժանի է մանաւանդ խմբագիր Պ. Առանձնակ Երուանդեան, որ 5-6 ամսէ ե վեր անձնուրբարար եւ առանց վարձատրութեան յանձն առած է հայ երիտասարդներէ եւ օրիորդներէ կողմէ երգեցիկ խմբերը, եւրոպական ձայնագրութիւն եւ ձայնակն երաժշտութիւն սովորեցնել եւ երաժշտութեան ճաշակը զարգացնել քաղաքի հայոց մէջ. Դիցիւ թէ հայ երիտասարդութիւնն այլ օգուտ քաղելով այս առիթէն իր պարտաւոր ժամերը յատկացնէր երաժշտութեան եւ իր մասնակցութեամբ ոյժ տար նորակազմ խումբին:

Երեկոյթին գումար հասուցիւր եղած է շուրջ 400 ֆրանք:

Երաժշտաւեր

Թրե վա 22 Մայիս 1901

Ամսոյ 17 ին դիւերը քաղաքիս մէջ հրդեհ մը պատահելով 5-6 խանութներ բռնկուելով յայտն եւ, Մարգու կորուստ բնաւ չկայ:

Կը լսուի թէ կրակը ներսն վարդաւանդին արձարանէն սկսած է, եւ թերեւս կառավարութիւնը լոկ այս ենթադրութեան վրայ հիմնուելով բանտարկած է յիշատի երկու զաւակները 2,000 ֆրանքի երաշխաւորութիւն մը պահանջելով:

Ներսն վարդաւանդի գաւառացի, իսկապէս շատ պարկեշտ հայ մը, քանի մ'սմբաներ յառաջ ընտանեօք մեկնած էր իր Հայրենիքը, յանձնելով իր խանութը իր երկու զաւակաց որոնք օրն ի բուն սուրճ ծեծելու տաժանակիր աշխատութեան նուիրուած քրդիկ մը փող աւելցնելու եւ օրին մէկը իրենց հայրենի օճախը, ծնողաց քովի կը դառնալու գիտեցիկ յայտն մը միշտ կը միմիջարեւին: Բայց այս դժբաղդ արկածը, սա անիմաժ կրակը մարեց խեղճերուն ճրագը: Հիմա քանտին մէջ կուրան կը հեծեն ողորակին: Սոս առթիւ տեղն է յիշատակել մի ուրիշ հայ արձարանագետի Տիար Գրիգոր Սարգիսեանի ցոյց տուած փութկոտութիւնը ինպատկ այդ խեղճերուն ազգին անդին դիմումներ ընելու մասին: Այս վերջինը այն հազուադէպ ազգայիններէն է, որ առիթի մը կ'ապաստն գործնականապէս ցոյց տալու համար իրենց կուրծքին տակ ծածկուող հայուն տաք սիրտը եւ այդու մոռցուել կուտան իրենց անհատական կեանքին վերաբերող բոլոր թերութիւնները, եթէ իրենք ունին:

Տարակոյս չկայ թէ այս կարգի մարդիկն շատ տեղի արժանի են մեր յարգանք քան թէ մեր սղա դասակարգին պատկանող այն անձանի մասնաւորները որոնք ոչ թէ միայն չեն դիտար կարեկցիլ թշուառին այլ եւ, հակառակ իրենց ջոջ-համբաւին, հրապարակին վրայ միմիջարեւ մնալու խօլ մարմանէն բռնուած մէկը մէկ տապալուել չար բաղձանքով մը, մինչեւ

ամենապիղծ տեսակէն զաւաղութիւններ իրարու դէմ սարքելու աստիճան կը ցանան:

Երեւոյթ մը որ այնքան սեւ է որ քանի եւ քստմեկտեղիչ, եւ որ աս'դ չենք կարող չը խօստովանել թէ մեր մէջ նոր չէ:

Հարիպ Ղառապի

Ենգելի (Պարսկաստան) 14 մայիս

Միջնալ փոսթի թղթակցութեան կը քաղենք թէ, Շահը հրամայած է առեւն առաջ դառնել իր բացակայութեան ժամանակ մօտ 3000 մարդիկներով ինքզինքը երեւակայական երազներով թագաւոր հրատարակող կարծեցեալ Մէհմէտ Շահը, որ մինչեւ այժմ բանտումն է: Թէհրանի պաշտօնական Պարսիկ թերթերից կիմացուի թէ Շուշտէրի եւ Շիրազի մէջ սպարտաւորութեան խուլ ձայներ կան եւ օր քան զօր կուելանան:

Շահի ֆէրմանով տրուած սյն իրաւունքը, որով հայերը մարտում սոյն պատգամաւորական ընդհանուր ժողով պիտի գումարէին թէհրանում եւ Հայոց կիգրոնական վարժարան պիտի բացուէր, ցաւ է որ շնորհիւ այն ինչ նորիկ եւ համալսարանական վարդապետի եւ մի երկու պոետախօս խաներու խնդիրը քննի:

Այս մի քանի օրուայ ճամբորդութեան մէջ հազիւ ժամանակ գտայ Ռաշտի եւ Էնզելիի մօտին թիկնա տեղիկութիւններ քաղել:

Ռաշտը մօտ 100 տուն հայ ունի. եկեղեցի եւ երկսեռ վարժարան եւ մի հատ վիճակաւոր քահանայ, որ երբեք պատիւ չէ կարող բերել տեղւոյն քիչ թէ շատ զարգացած հայ ազգայնականութեան: Տեղւոյն մէջ կան բաւական թուով Յօններ, որոնք պարագում են բոժժի գործով. հայ իրի մէջ իսֆահանջ սկսեալ թէհրան, Ղազպին, Թաւրիզ, Ռաշտ եւ Էնզելի օղիաւս ճառութիւնը մեծ տեղ է բռնած:

Էնզելին ունի 15 տուն հայ եւ մի եկեղեցի ուսումնարանով. քահանա նոյնն է ինչ որ Ռաշտին. երկուսի հեռաւորութիւնն է 35 վերստ. որուն 20 վերստը գետ է. Այստեղ բաւական բարեկեցիկ է ժողովուրդը:

Ամսոյ 10ին առաւօտեան եղաւ նակը շատ լոււ էր. սակայն կէս օրից հազիւ անցեր էր մէկ ժամ, հեռագիր ստացուեց թէ Ղազպինից մինչ իւզպալիճայ տաւած գիւղը որ 12 մղոն հեռաւորութիւն ունի, մի կտոր թանձր եւ խիտ միմիջարեւ տապ օրոտայով ծածկել էր երկինքը, որմէ անմիջապէս վերջը տեղացի էր ամեն մինը կէս ձուաչափ մեծութեամբ կարկուտ, որոնց ծանրութիւնը 25 30 մարտ կըլարէ. առեւմ ճիշդ կէս ժամ, կարկուտից վերջ շրջակայ բարձր լեռներից հեղեղ բացուելով թափուում է ցած եւ հետեւեալ միջոցներէն է պատճառում, 40 ջորի մահուտի բռնկումով, 4 չորեպան, 12 էլ շաքարի բռնկումով 15 ուղի առանց բռնու, 60ի չափ կողմ, ոչխար, ձի եւ յին որոնք նախքան միջից քսչած տալում է, եւ մի մարդ իշով, որ իր հետ պոյուտակի մէջ ունեցած էր 200 թուման (460 բուլի) փող:

Ասքան մի անհր անելուց յե-

տոյ Ռաշտից դէպի Ղազպին անցնելու 194 վերստ ճանապարհին մէջ քանդած է 3-4 վերստաչափ ճանապարհ:

Սահմանազրուխ լինելով Ռաշտ եւ Պարսից, միջատուներ հաստատուած է այստեղ քանի որ Պէլիզգացիք գործի գլուխ են մարտային զորքերը կանոնաւոր են, կան նաեւ հայ պաշտօնեաներ, որոնք մէջ աչքի ընկնող անձնաւորութիւնն է թէ ընդունակութեամբ եւ թէ ամէն ծառայութիւններով Պ. Պարսի խուպէսէրեան:

Այստեղ շինութիւնները գրեթէ բոլորովին հակառակ են Պարսկաստանի ընդունակ սովորական ձեւին այլ, աւելի մօտ են Պոստոյ ձեւերուն փայտաշէն եւ ծածկը կղմիտով գոցուած:

Գ. Սորունի

Ֆիլիպ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒՆ

«ՄԱՔՐՈՒՆԵՔ»-Ի ՈՐ ԶԸ ՀՈՏԻ

«Շարժում»ի 312 թիւը որ պատահաբար ձեռքս անցաւ կը գրէ թէ վերջերս «Իրաւունք»ի խմբագրութեան զրկուած հայհոյալից Իրաւունք ստորագրած նամակը զգալի կեղծիք մ'է Թիլիպէի հակադաշնակցականներէ, վարկաբեկելու համար տեղւոյն քահանայականները, թէ մանրակրկիտ քննութեամբ ստուգուած է որ եւ ոչ մէկ զանազակցական թույլ կուտայ իրեն այդչափ ստոր քայլ մը առնել, եւ ի լրուում ամենայն իր ասպարոյց աղկեղծիքի կըլէ թէ զանազակցականներ երբեք իրենց «Իրաւունք» անունը չեն տար:

Ա. Նախ յիմար ըլլալու չափ ծիծաղելի կը դառնար երբ տակաւին այդ համոզումը ունիք թէ դուք վարկ ունիք ժողովրդին մէջ. ողորմելի միմիջարեւութիւն մ'է որ կուրենաք դուք ատով, որը խելու չափ անիմաժ չի պիտի ուզէիք գտնուել, եթէ ձեր այդչափ ստոր արարքին հեղինակներ չը ճգնէիք ցոյց տալ հակադաշնակցականները, որոնք լաւ ճանչնալով ձեզի ու ձեր «այար» գրիչներն մեյմի մէջ թափելու չափ աւելորդ աշխատութիւն յանձն չեն առնուր, այդ մասին: Բայց վայրկեանի մը համար միամտութիւն ունենալով խեղճը ձեր ներկայացուցած ձեւով ընդունել, այսինքն Թիլիպէի հակադաշնակցականները ըսած ըլլան ձեզ վարկաբեկելու նպատակաւ, բայց ինչ պէտք ունենին անոնք ծածկելու տեղւոյն անունը, որը մենք «Իրաւունք»ի Տ. խմբագրին անձամբ դիմած եւ ստուգած ենք որ նամակին մէջ նշանակուած չէ Թիլիպէ կամ Ֆ. Պոլիս, այլ «Իրաւունք»ի խմբագրութիւնը նամակին Թիլիպէի զրկում ըլլալը թղթատարական վարչութեան կնիքէն հաստատուած է:

Բ. Առանց կարմրելու շատ վրան բաց ստու մը կը դրոցունէք պրն. Դաշնակցականներ երբ ձեր տողակին մէջ կը գրէք զեւ ոչ մէկ զանազակցական իրեն թույլ կուտայ այդչափ ստոր քայլ մը առնելու, երբ 8-10 անտողակի հայհոյալից նամակներ Թիլիպէի հակառակորդ գանազան անձնաւորութիւններու ձեռքը կը գտնուին որոնք զբաւոր չ'առնելով կը խօսին թէ մեր զանազակցական աղբարիկներ իրենց փայլուն «Վիկի» գարութիւններէն մին նաեւ բնագումար են «անօնիմ» նամակներու գրութիւնը, զորս

պատրաստ ենք ցոյց տալ հետաքրքր-
բաւոյ զայնակցականներու :
Գ. —Ապագայ մը չէ՝ ձեզ մաքուր
հանելու աղջկաքի լպիւր վարմունքի
մը գէտ ըսել թէ՛ դաշնակցականներ
իրենց դրօշակեան անունը չեն տար .
մինքն Յիւլիպէի դաշնակցականներ
մեր առջեւ ունենալով . չոչափելի շատ
մը պատճառներ ունենք ըսելու թէ՛
անոնք մեծամասնութեամբ մաքուր
կոյր , լիզուով համը ու ի՞նչ բլլալը
չը գիտող կարգ մը խեղճ ուղորմելի-
ներէ կազմուած են , որոնք իբրեւ
պրոպագանդիստ աւագան ընդունելով
դաշնակցութիւնը նետուած են անոր
մէջ , օրինակները չեն պակսիր : Մեր
աչքին առջեւ են կաթիլիկ մը պրո-
պագանդան տակ դաշնակցական միւս
հերոսներ ու տուտու հերոսներին ու
որոնք սիրտ մը ունինք այն ալ «Տրու-
շակ»ին (Դրօշակ) ըսելով կըսեն ու
կերթան :

Խօսքին կարճը «մաքուրեցէք որ չը
հոտիք» :

ԾԱՆՈԹ ՀԱՅՈՐԻՆ

ՆՈՐ ԳԻՏ ՄԸ

Հաճեցէք անկիւն մը շնորհել երկ-
տողիս :

Բաւական ժամանակէ ի վեր նոր
մէջոց մը գտած եմ , առանց գործիքի
ընդօրինակելու նոյնութեամբ ամեն
տեսակ լուսանկարներ ու ձեւանակա-
րներ , առանց մանր ու բարակ գիծ մը
կորսնցնելու : Իբր առաջին փորձը
գործնական եմ «Հայ լուսանկարիչ»
հարկաւորայ յորէլեանը» եւ «Հայ-
կական գիւնանշան»ը . որոնցմէ մէկ մէկ
օրինակ կը գտնուին Տիար Ա. Զարպ-
հանէլեանի գրատունը :

Թէեւ ասկէ շարքիներ առաջ , «Գի-
տական նորութիւն» վերնագրով երկ-
տող մը կարգացի «Հայկիկ»ի մէջ ,
որպէս թէ Անդրկապի գիտնական Ու-
թըր Սմիթն ալ գտած է միջոց մը ,
որով գրքերու մէջէն պատկերներ կըն-
դործուին անոնց գործիքի եւ առանց
փաստելու գիրքին . բայց Մաթըր ըՍ-
միթ կը գործածէ փոսփորափայլ նիւթ
մը որ ամեն տեղ չը գտնուի ու ամէն
մարդ չի կրնար դիւրութեամբ ձեռք

բերել . նոյնպէս կ'գործածէ սովորական
գրաւուր թղթը . առ ալ մեր ուզած
մեծութեամբ չկայ ամէն տեղ :
Իսկ իմ գտած միջոցիս առաւելու-
թիւնը սա է , որ ոչ գործիքի եւ ոչ
այդ նիւթերէն մէկուն պէտք ունի .
սա աշխատի պարզ է ու դիւրամատչի-
լի որ ամեն տեղ կարելի է գործ դնել
եւ ստանալ կրնայ գիւրութեամբ
ձեռք բերել : Այս միջոցաւ կրնան
ընդօրինակուիլ ճշտութեամբ ճարտա-
րապետական ամեն տեսակ դժուարու-
թիւններ , աշխարհագրական մեծ
քարտէզներ , ձեռնարկներ եւ այլ եւ
այլ պատկերներ , պայմանաւ որ ա-
ստոյց հակառակ երեսը անաղարտ ըլ-
լայ :

Լուսանկարիչ
ՄՈՒՇԵՆ Կ. ՍԵՐԵՆԵԱՆ

Վառնա 24 Մայիս 1901

Դ. Խմբ. —Գիտը ըստիւնքեան գնա-
հատելի է . բայց առաջին փորձերով
եղած նկարները գիտեցինք ուստեսնա-
լի պէտք եղաւ յատկապէս ինչը դեռ
չունին : Հետեւաբար Պր. Մուշեղ լա-
կնէն ելիք քիչ մը աւելի խնամք տա-
նի . եւ գործածէ ինքն ալ այն նիւ-
թերը որոս անգլիացի գիտնականը
հարկ դատել է , անշուշտ կատարելա-
բան մը արտադրելու համար : Եյն
նիւթերուն ամեն տեղ չի գտնուիլը
խնդիր չէ . այդ անտին հետեւող մը
ընկալանաբար արագատի մէջ չի պի-
տի բնակի , ու կարող կրլայ ձեռք
ձգել այդչափ ընդհանրացած պարզ
նիւթեր . խնդիրը գիտը կատարելա-
ընկուն մէջ է :

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԳ

ԵՐԿՍԵՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԳ

Գործ . ժողովս շնորհակալութեամբ նուէրներ ստացած է հետեւեալ ազնիւ ազգայիններէ , եւ կուզայ հրապար- կաւ իր շնորհակալութիւնը յայտնե- լու :	ՅԻՄՆ.
(Զուիցերիա) Կլաուսի քա- րոզիչ Գերմանացի Տք. Պուէն	17. —
Տիար Մելքոն Մելքոնֆէ	1. —
(Զուիցերիա) Շիրաքի Տիար	
Ղազարոս Ղազարեան	13.70
Տիար Գրիգոր Արսլանեան	2. —
« Աւետիս Էդիսյան »	80
« Գալուստ Սահաթ- ձեան » սօնախմբութեան առ- թիւ	5. —
	39.50

Ի դիմաց Գործ . ժողովոյ
Ատենապետ
Յ. Ճանկիրեան Տօ՛ր. Շուրեան

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ Հայ թերթերը տըր-
տունի կը յայտնեն թէ Ազգային
Հիւանդանոցի մէջ պատուաւ-
եւ ուրբերուն պէտք եղած չափով
սնունդ չարուելուն պատճառաւ կը
հիւանդանոցէն Անցեալ շաբթու
Հիւանդանոցէն կեզր . վարժարան
յաճախող որք մը տնօթութենէ
ժարեր ինկեր է դատարանին մէջ .
տուրքուած է թէ մատակարարը
այդ որբին քիչ մը հաց ու մէկ
հաւկիթ կուտայ եղեր , երբեմն
ալ հաւկիթ չկայ ըսելով միայն
չոր հացով կը ճամբէ :

—«Բիւլանդի» խոսիւ կը
քննդատէ կիրակնօրեայ Մանկա-
վարժական Դասընթացքին դասա-
խօսները Գուրգէն , Պէրպէրեան
եւ այլն , որոնք դասախօսութիւն-
ներն փոխանակ մանկավարժական
նորագոյն եւ ընկալելու «մէթոտ» .
նիւրու բացատրութեանց յատկացը-
նելու , Աստղաբաշխութեան , Օս-
մանեան գրականութեան եւ ուրիշ
քմահաճ նիւթերու վրայ կը ճա-
ռեն ու այսպէսով դասընթացքի
բուն նպատակէն կը շեղին եղեր :

—Պոլսոյ Ազգ. Պատրիարքարա-
նի Խառն Ժողովոյ վերջին նստին
որոշումներէն Դիւանը ի մէջ այ-
լոց հետեւեալները հաղորդած է
լրագիրներու :
* * * Ժողովը ուշադրութեան առաւ
Սիւի Կաթող. Տեղապահ Տ. Կիւրակոս
Եպիսկոպոսի գրութիւններն եւ լսեց
Պատրիարքին կողմէ այս մասին տըր-
ուած տեղեկութիւնները : (Կարծես թէ
աչքապաւիկ կը խաղան Պատրիարքա-
րանի մէջ . ալ եւս ամեն խնդիր ժո-
ղովուրդէն դադանի կը պահուի :)
* * * Խառն ժողովոյ կողմէ Յանձ-
նաժողով մը կարգուած էր Ռուսմանոյ
եւ Պուլկարոյ Դոգեւոր հովուութեան

եւ վարչական կազմակերպութեան
խնդիրները ուսումնասիրելու եւ հարկ
եղած տեղեկագիրը ներկայացնելու :
Յանձնաժողովն իր աշխատութեան ար-
դիւնքը տեղեկագրով մը հաղորդելով ,
ժողովը եղած կարգադրութիւնները ըս-
կզմամբ ընդունեց եւ որոշեց որ այս
կրկին վիճակաց իւրաքանչիւրն իր
ուրոյն Առաջնորդն ունենայ , եւ հարկ
եղած պաշտօնական բանակցութիւնը
կատարուելով , առաջնորդաց պաշտօ-
նավարութեան եղանակը սահմանուի :
Այդ առաջնորդաց տրուելիք հրահան-
քը ծրագրելու ու ներկայացնելու գոր-
ծը յանձնուեցաւ Ստեփան փաշայի :

—Պարակէօզեան կտակի Գոր-
ծադիր Յանձնաժողովը Եւ. օրուան
նիստին մէջ որոշած է այդ կտա-
կով բացուելիք որբանոցին իբր
կալուած գնել Բերայի շիտակ
ճամբուն վրայ գտնուող «Օթէլ
Խտիկի»-ը , որ շուրջ 15000 ոս-
կի արժէք ունի . Կնժան համար
հարկ եղած գործողութիւնը կա-
տարել Պատրիարքին յանձնարար-
ուած է :

Նաեւ նոյն Յանձնաժողովոյ ան-
դամները հետեւեալ օրը գացած
են Ազգ. Հիւանդանոց տեղւոյն վը
բայ խորհրդակցութիւն մը կատա-
րելով Պարակէօզեան Որբանոցի
չէնքի գետնին մասին վերջնական
կարգադրութիւնները ընելու հա-
մար :

—Աղթմարէն Տ. Արսէն վար-
դապետ տեղւոյն մէկ քանի վան-
քերուն պարտակաւ , միայն յայտնե-
լով , տնօրինութիւն մը խնդրած է
Ազգ. Պատրիարքարանէն :

—Պատրիարքը Եպարքոսին եւ
նախարարներէ յմանց հետ կրկին
տեսակցութիւններ կուենայ Սիւսի
կաթողիկոսական եւ ալ ազգային
խնդիրներու առթիւ , բայց «գաղտ
նիք մեծ» : Խեղճ հայ ժողովուրդ
յիշէ՛ սա խօսքը՝
«Անօրէնք ժողովեցան ի միասին
եւ ի վերայ պատմութեան իմոյ վի-
ճակ տրկանէին»

—(—)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ ՖԻՆԱՆՍԱՅԻ ՄԵՋ

ՆՈՐ ԳԻՐԳ ՄԸ

(Շար. Աստուրի քիւն)

Զինակիր գիմարութիւնը լուսնիներու
այս խրոխտ ցեղին աւանդութիւններէն է :
Նաեւ գիտէին , Հայաստանի ամեն կող-
մերէն : հասած տուրք լուրերէն թէ իրենց
հայրենակիցներուն կ'որուստը արքունիքէն վրձ-
ուած էր : Խնդիրը յորձանգիւնի առաւելու-
թիւնը պահելու մէջ կը կայանար : Ատոր վրայ
դէպքերը կը զահալիւթէին : Հոյտ . 29ին Զէյթունի
թուրք զօրանոցին դրաւումը տեղի կուենայ , հոտ
հայերը 700 մարդ գերի կընեն : Յետոյ կսկսի ար-
շաւանդի , զարանակալութեան ու փոքր ճակատա-
մարտերու մահացու պատերազմ մը , Զէյթունի
չրջակայքը : Թուրք զօրագունները թուրք քաղաք-
ներու ժողովուրդին օգնութեան կը հասնին : Քրիս-
տոնեայ ու միւսլիման , կը մրցակցին ջարդելու
ու թալլելու եռանդին , կիսավայրենի մարդոց մէջ
ու զանակի պատերազմ մը , որ մերթ թաւանակին կա-
նոնաւոր բանակին անգլիականութիւնները զանոնք կը
գերազանցէր :

Մահալը պէյի հրամատարութեամբ թուրք գու-
մարտակներ անխտիր կաթիլիկ քարաղութեանց ու
լուսաւորական գիւղերու աւերումը կը սլարապէին :
22 Նոյեմբերին հայր Սալվաթօրը սպաննեցին , անոր
առաջնորդելէ ետք որ իսլամութիւնը ընդգրկէ : Բայց
մեծագոյն չարաշարժքները Ֆուրուզ տեղի ունե-

ցան , ուր թուրքերը հարիւրաւոր կիներ գերիւա-
րեցին , 3ինչ անոնց ամուսինները կը պատերազ-
մէին , մէկ մասը շարդեցին , միւս մասը բռն բա-
րեցին կամ իրենց հարէմները բերին : Զէյթունի
հայրենիները , երբ իրենց ամուսինները պատերազ-
մի էին , այս լուրը հիւրընկալեցին , կըսեն , ի-
րենց խոհանոցի գործիքներով , ապստամբելու
սպտանացող 400 դերիներ կոտորելով :


Զէյթունի շուրջ երկաթէ շրջանակը հետզհետէ
կը սեղմուէր : Հայ հրոսախու մեր գիւցաղաբար
կիրճերը կը պաշտպանէին , բայց ամէն կողմերէ
Օսմանեան զօրաբաժինները կը հասնէին . Հալէպէն
Ատանայէն , Կեսարիայէն քաղաքը պաշարելու
համար , բնակչաց հետ խտնիխտուելու կը մնային
չրջակայիներէն եկած մարդիկ , կիներ եւ տղաքներ ,
Պաշարուել 14 դեկտեմբերին սկսուած , Յունվար ,
5 ին դադրեցաւ , պետութեանց միջամտութեան
շնորհիւ : Այդ քաղաքը կամ աւելի ճիշդը այդ գիւ-
ղը , խորխուրտունիք բաղկացած , առանց պատ-
նելի եւ առանց հրէսանիի , միայն քանի մը հեղե-
ղաւորէ պաշտպանուած , 5000 պաշտպանող ու-
նէր , այս վերջինները , մասամբ կաշքարէ հրա-
ցաններով զինուած , տիրպետուած 2000 մէթր
հետաւորութեամբ հրէսանիի ունեցող պաշարող բա-
նակէ մը . զիմարդիցին , 60 000 մարդոց որոնք
25000ը կ'անոնաւոր գիւղեր , ցուրտ , անթեւ-
թիւնը , յոգնութիւնը եւ հիւանդութիւնը , որ մեծ
մասամբ ծառայութեանց անբաւականութեանը եւ
կազմակերպութեան չղոյութեանը պատճառաւ յա-
ռաջ եկաւ , պաշարող բանակին կէսէն աւելին կո-
տորած էր : Այս կարճ պատմութիւնը կը ձօնեմը
թրքական նոր զօրաբանակին եւ անոր թիսալիոյ

մէջ բրած գործողութեանց հիացողներուն : Միայն
ցաւալի է որ յունական սահմանագլխուն վրայ
Զէյթունի նման տեղ մը գտնուած չէ :

Մեր նպատակը այս գաւառին ու իր մասամբ
կամ ամբողջութեամբ հայաբնակ քաղաքներուն
մանրամասն նկարագրութիւնը ընել չէ , զոր ար-
գէն այցելելու առթիւ չունեցանք : Ֆրանսա ոտք
դրած առեւնիս , լոյս կը տեսնէր ապստամբութեան
գլխաւոր պետերէն միոյն — չորս պարտիզներէն միւն —
օրադիւր , գիւրք մը զոր տեսակ մը կառկածաւքով
թղթատեցինք , ինչպէս երբեմն պէտք է Արեւելք-
ցի ի մը ձեռքով Արիւ ելքի վրայ եղած պատմութիւն
մը ընել : Առանց զօրաւորութեան կը խոստովանիմք ,
ինչ որ պատմած է պ . Աղասին . պարզ եւ համեստ
պատմութիւն է իրողութեանց զորոնք մենք շատ
անգամներ լսեցինք եւ մեր Դօթագրութեանց մէջ
յուշագրեցինք : (1) Յիշած պատմութիւնները ,
գրուած չորագործութիւնները , բոլորը կը համա-
սեն ոչ միայն վիւրա դեր — գնդապետին տեղեկա-
գիրը , այլ նաեւ այժմ ամենուրեք բերանը եղող պատ-
մութիւնները : Կարելի չէ երեւակայել , ինչպէս
ըսինք , այն արդիւնքը զոր միւսլիմաններու մէջ
յառաջ կը բերէ այս Զէյթուն անունը , իրենցմէ
այնքանին գերեզմանը : Պաշարումէն քիչ ետք ,
բտրեկամներէն միւն , Մարալէն Հալէպ դադած ա-
սան , Արապացի զերմտիւր զօրքերու պատահեցաւ
որոնք անոր հարցուցին . «Զէյթունի կողմերը դեռ կը
պատերազմէն : Ըսէ մեզի , վասնզի եթէ հարցու-
ցածնիս իրաւ ըլլար , անմիջապէս պիտի փոխէինք»
(Շարունակելի)

(1) «Զէյթուն , սկիզբէն մինչեւ 1895 ի տպըս-
տարութիւնը» հեղինակ Աղասի , թարգմանեց
Քրանսերէնի Արշակ Զօպանեան :

ՀԱՎԱՍՏԻՍԱԹԸ ԲՕԼ ԻԹԻԳԻՅԷ



ԹԻԻԻԲԻՍ

Պոլսեան հազարի նիւթերը միշտ
հազարը օլտըղը իւրէ, 4 ա.
տէտ իմալիա զըրհլարը թիւր.
քիա սուլարընա տողու հարէ. քէթ
իմալէրինա Սուլթան տէրհալ
Բընդէզա վուգուլընա տողա
յը իմալիա էլիսինին թալէպինէ
իգթիֆա վէրիմէսինէ էմր իտուպ
Պալը Ալի տալի Սուլթանըն պու
էմրինի սէֆարէթ հանէյէ պիտիր
տի. Պու պապտէ Եաննա տալի ա.
ժանս Սիւլթանին պիտիր իմի
տիր. «Պալը Ալինին միւսթաճէլ
պիր էմրի իւրէ, իմալիա հիւ.
քիւմէթին պիւթին թալէպինէ
րինէ իգթիֆա վէրիտի. թիւրք
հիւքիւմէթին վէքիլի. Եաննա տալի
մազալը զօնսուլթանէյէ կիտուպ,
աֆի տիլէտի. Խանէսինէ թէճա.
վիլ իտիրիլ օլան իմալիարու
Պազմինալէ էօտէնտի. Էվէ կի.
րէն ասքէրլէր 15 կիւն մահպու.
սիլէթէ մահքիւմ օլտրլար. Մէսէ
լէ գաբանտը. Հարպ վաբօրլարըն
կէրի տէնմէսինէ էմր վէրիտի»

—1896տա, Էրմէնիսթան գրի-
կընլարընտան տօլալը զարարտիտէ
օլան Ֆրանսըլ թապալարընա էօ.
տէնմէք իւրէ, թիւրք հիւքիւմէ-
թի Ֆրանսըլ սէֆարէթինէ 500
պին ֆր. թապմինալէ վէրտիկինի
թէլէկրաֆ պիտիրտի.

—Կէլէն պիւթին հաֆթա ԲՕ.
թանալը Բուս Բաթրիգին ինթի-
խալը իլէ ուղարան Ֆէնէր բաթ-
րիգ հանէսի նիհայէթ սապըք բաթ
իլէ ինթիխալ իմիլ տիր. Ամն
Տ. Եօաքիմին սէպաթ, տիրայէթ
ու իգթիտարը Էվիլէթի ինթիխա-
լը իլէ իսպաթ օլընմըլ օլտըղըն-
տան, նիհայէթ Բուս մէպուսար
վէ մէտրապիտլէր, անըն լիյա
գաթը իւրէ, ումու Օրթոտքս
բաթրիգիկի կիպի մուհիմ պիր
մէվզըյա մինասիպ ատտ իմտի-
լէր.

Պու ինթիխալտան թիւրք հիւ.
քիւմէթի ալալ խօշանմամըլ տրը,
ֆազաթ, չի՝ չարէ.

—Էնէպի թապաաւընտան օ
լուպ տէ, թիւրքիտա տալա վէ.
քիլիկի իտէն ափօգաթլար թիւրք
էնճիւմանընտան շահատէթնամէ
ալմազըղըն հուգուրը մահքէմէյէ
գապուլ օլընմալաճալար. Ալօ
գաթլար Սիւսալտա թէճէմիւ
օլընուպ, իլպու Եէնի էմիրէ գար-
չը բրօթէսթ իմիլիլէր. Սէֆու-
րէթ հանէլէր իլպու բրօթէսթ
գուվէթ վէրէճէլէր.

—Արնապուտար թարաֆընտան
Սըրպ սինօրը իւզէրինէ Եէնիտէն
վուգու պուլան թէճապիզաթտան
տօլալը Սըրպիա էլիսինին Պա-
լը Ալին վէրիլ օլտըղը շէտիտ
նօթալա՝ Բուսիա էլիսի տալի

գուվէթ վէրիլ օլտըղըն թան
պէյան իմալէլէ պէրապէր տիկէր
տէվիլէթին ալը հարաքէթտէ
պուլընմալաճալարըն, պա խու-
սու պիրինին Սըրպ սինօրը իւ-
զէրինտէ գարըչըղընտան իսթի.
ֆաթէ իմալէյէ շու սըրա կէօգիւ
օլտըղըն իւզէլէ իմիլ տիր.

Արնապուտար յունիս 1 տէ,
Սըրպալարտան պիր սինօր մուհա.
ֆրըլ էօլտի լիմիլէր. Եունիս 3
տէ, Արնապուտար թիւրքիլի
քէօյիլտէն հալման սիւրմէքաէ ի-
քէն, արգալարընտան գոշան պիր
Սըրպ ասքէրի գաթլ իմիլիլէր.
վէ պէլլէ, ալարտան պէրու հէր
հաֆթա սիլկուսըղըղլար վուգու
պուլմազալա ըմըլ.

—Բուս էլիսի Ս. Ջինդիկէ
բալար էրթէսի կիւնիւ Սիւսալա-
լա Էլիլիլիլ տիր.

—Ալմանիս տէվիլէթի խալլը
վազլտան պէրու պահը Ահմէթ-
տէ (կարմիր ծով) Ֆրանս տա-
լարըն Սուլթանտան իսթէմէքտէ
վէ Սուլթան րէտտ իմալէքտէ իտի.
չիմտի «Թան»ըն պէյանին պինա
էն, Ալմանիս մէքիւր տալար-
տան պիրինտէ ճէսիմ պինալար
ինչալ իմալէքտէ իմիլիլէր. Եունի
կիլիլտէն իքի ալիլէթ պէյինտէ
ուլալընմըլ քի Ալմանիս օրա-
լարտա պիր քէօմիւր տէրօր թէ
սիս իմսին.

—Իմալիա մէլիսի մէպուտան
ազալարընտան 30-35 քիլի հէր
պիր ֆըրգալա մէնսուպ, էքսէրի-
սի հիւքիւմէթ թարաֆտարը մէճ.
լիսէ պիր պէյաննամէ թազտիլէ
Արնապուտարըն միլի իտտալա-
րընա, Եունի Ալպանիսին իս-
թէլլալիլիլիլէ գուվէթ վէրմէք
իլիւն իմալիա հիւքիւմէթի քիլի.
թիւր վէ տիլլալալըլ թարիգի
իլէ հարտըլ իմալէսինի թէքիլի
իմիլիլէր. Մէլիսի մէպուտան
պիւտէն մէսէլէսինի հալ իմտիք-
տէն սօնրա իլպու թէքիլիլիլ թահ
թը միւլէքէրէյէ ալաճազ տրը.

ՍԵՐՊԻՍ

Եւնի Բուս նաղըրը Ս. Ջարի-
քօֆըն վէ թիւրքէթ նաղըրը Ս.
Միլօմանօվիլին Սըրպիալա կէլէ-
սինէ Պէլիկրատա պէօյիլէ էհէմ.
միլիլ վէրիլիլ. Կէօյա պու
Եօլըրըլա Բուս տէվիլէթի Սըր.
պիալը թէվիլիլ իտուպտէ թէհէմ.
միլ օլընմալաճազ սօն հալլէրէ
պիր չարէ պուլմազ էֆընարընտա
ըմըլ.

—Ջար Սըրպ գրալը վէ Գրա-
լիցաւըն Բիթրապուրկա տալէթ
իմիլ օլուպ, Բուսիանըն Սըրպ
միլիլիլիլ վէ իտանտանըն գրալիլ
հիւսնի թէվիլտուհի պազը օլտը
ղըլը իսպաթ իտէճէք տիր.

ԿԻՐԻՏ

Կիրիտի Եունանիսթան իլէ պիր
լէչտիլմէք իլիւն մէլիսի մէպու-
տանը գարարնամէսին վէ Եանտ
օ՝ մազսէտէ տալիլ իսթիտա գու-

պուլ իմալէմէք իլիւն տէվիլէթի
Հաննա տալարընա վէ
Բէթիմօ վէ Կանտիա գօնսուպ վէ.
քիլիլիլէ էմիլիլ վէրմիլ օլտըղ-
լարը թէլէկրաֆ պիտիրմիլ տիր.

ԻԹԱԼԻԱ

Իմալիա Գրալիցալը պիր գըլ
էվալտ տողուրմուլ օլուպ, Բէն-
սէս Եօշանա թէսմիլէ օլընտը.
Գրալիլիլ թահընա վարիս օլմազ
իլիւն էրքէլ էվալտ պէլէնմէքտէ
իքէն գըլ տողմալար պիր ալ խօշ-
նալիլիլիլիլէ հասըլ իմտի
իսէտէ, Գրալ վէ Գրալիցա տահա
կէնճ օլմազլէ. Էրքէք պիր վալի
ալտ տալիլ տողուրապիլէքէլէրի
թապիլ տիր.

ՉԻՆ

Սուլթանտան Չինէ Եօլանըն
հէյիլիլ մէպուտէ Եանկալա Էէ-
լիլիլ տիր. իլպու թիւրք հէյ-
իլիլ կէօնա Չին իսպալարը պէյ
իլիլտէ իմիլիլ վուհուր իտէր ի-
սէ՝ սուլհ ու տալիլիլ շալըլաճազ
ըմըլ.

—Չինտէն տէվիլէթիլէ Էօտէնի-
լէքէ օլան թազմիլիլիլ նի Եօլ-
լէ հուսուլա կէլէճէկինէ տալիլ
միւլաքէլէ տէվալ իմալէքտէ օ.
լուպ, էնէպի մալարընա կէօմ
րիւք տըլըրմազ վէ սֆիօն
տալիլիլիլ միլիլ իմալէք իտտալա
լարընտա ինկիլիլէրա գարչը կէլ
մէքտէ տիր. զիրա ինկիլիլիլիլ
էն զիլալտէ Չինտէ մալ սարֆ իմ.
մէքտէ օլտըղը կիպի, աֆիօն տա-
ղալթալը ումուլէն քէլտի էլիւն-
տէ պուլընմազլէ, մէքիլիլ թազ
միլալ ինկիլիլիլիլ սըրիլընտան
չըքմըլ օլաճազ.

—Թիլէնճիլտէ Էվրոքա ասքէր-
լէրի պիրպիլիլիլիլ պօղմալա գալ
զըլաղալարը կիպի, Թաղա Եօ-
լընտա տալիլ պալիլա զուհուր ի-
տուպ, 2 ֆրանսըլ էօլմիլ վէ 4
ֆրանսըլ, 3 ալման վէ 4 ինկիլիլ
հարէլէնմիլիլէր.

Չին պարպարլարըն թէրպիլիլ
իմալէյէ կիտէլիլ, պու հարէքէթ
լէրի իլէ քէնտիլէր տալիլ պար-
պարլըլ էլամէթի կէօսթէրմիլ օ-
լըլարըլ.

—Իմալէթալըն պիրալէրի Բը-
րէնա Չին վալտէրլէ իլէ Պէրլի
նէ կիտուպ, Բէքիլտէքի Ալման
Էլիսինին գալլընտան տօլալը,
Չին իտանտանը իմալէթալը թա
րաֆընտան պէյանը թէլէսիլիլ ի.
տէճէք.

—Ինկիլիլ կաղէթալարըն պու
զըլը շու տրա ինկիլիլիլիլիլ
Չինտէ Էէնի միւլաքիլալ չըգար-
մալա, վէ քէնտիլիլ թէլիլիլիլ
իլգա իմալէյէ սըրալը օլմալարըլ-
ըն հազմազալա տըրլար.

ԲՈՒՍԻԱ

Բուսիա մէլիսի վիլէլալը
Ֆիլիանտանըն միլիցիալըն Բուս
օրտուսընա տալիլ իմալէք իտու-

տալընտա, հարպիլէ նաղըրըն
թէլիլիլիլ ըտտ իմիլ տիր.

—Իլպու գարալ Ֆիլիլէր պիր
ալ նէֆէս ալտըրմըլ օլաճազ, զի.
րա պու միլլէթ 2—3 սէնէտէն պէ
րա քէնտիլիլ սէրպէլտիլիլիլիլ
զալալ իմալէք տէհէլիլիլտէ տիր.

ՄԻԻԹԷՆԷՎԻԹԷ

Անվերտէ կէօմրիւք տէրօրնտա
պէօյիլէ հարիլ գուհուր իտուպ,
րէք շօք մալլէր Եանմըլ տրը.

—Եարըլան սօն սթաթիսթիկ
Բարիլ էհալիսինի 2,714,068 քի-
լի կէօսթէրմիլ տիր. 1896 տա
չէհիլ մէլքիլտէ 2,536,834 ճան
մէվճուլ ըտը. Եանի պէլ սէնէ
գարֆընտա 179,234 քիլիլարմըլ
տըլ, ֆազալ զանըն աճիլալէ-
միլքէ պու տըլալար իտարիլտէն
կէլմիլ օլմալը, զիրա Բարիլ մա-
տալարը մալիլալ օլտըղը իւրէ
էվալտ տողուրապիլէքէլէրի
իտէլէր.

—Մարկարիտէ (Ալէրիա) Ա.
րապարըն հիւքիւմէթ վէ խիւ-
թիլալարա գարչը ըտտան իմիլ
օլմալարընտան տօլալը 166 արապ
հապս օլընմըլ, ասքէրլէր վաթ.
թաղը իլէ սիւրիլիլիլ հարլ օլ-
մուլ տըլ.

ԹԻԻԻԲԻՍ ԱՐԻՅԷ

— (—) —

ՉԱԽԻՐԷ	
Պոնդսու	
Վալոն. 51/56 լի հըթ. 7.60/9.60	
Արապա 56-58 լի հըթ. 8.—/11.20	
ԱՐԲԱ	
Վալոն 100 քիլ. 8.75/9 —	
Արապա 38-47 լի հըթ. 5.—/5.80	
ԵՈՒԼԱՅ արապա 4.—	
ՅԱՍՈՒԼԻՆ. 100 օգա 18.—/23.—	
ՉԱՎՏԱՐ 7.60/8.40	
ՏԱՐԸ 6.—/6.60	
ՄԸՍԸՐ լալ. 58-60 լի. 6.40/6.60	
Արապա հըթ. 6.60/7.60	
Կիւնա 70/80 արապա վէ 7/10 լա	
կոն կէլմէքտէ տիր.	
Վալոն մուսթիլէսի ալիլալ Ֆրանս- լէ, արապա կիւմէլլէ, նաթ. 22.90	

ԲԱՄՈՒԳ	
Վարնա մաղադալարընտա իրիլք սաթըլարըլ.	
Ինկիլիլ իրիլիլ ն. 8/14 10.50	
» » ն. 18/24 12.50	
Եէրլիլ իրիլիլ ն. 8/14 10.—	
Աթըլմըլ բաճալ հօղա 2.50	

ՎԱԳՐԱԼԻԹԷ	
Վարնա բիւցալարընտա պաղգալիլ մալլէրին պու կիւնիլիլիլիլիլ ալ- թուլ ֆրանս իլէ ֆ. Սըր. Սըր.	
ԳԱՂԷ 1.62/1.72	
Շէքէր. — (Էլլէ) քիլօ — 57/58	
« (քէսմէ) սանարը 30.—	
Բիրիլնճ—ճարոն չու— 34.—	
վալը Բիրիլնճ ֆիլիպէ չու վալը 40.—	
Բիրիլնճ ինկիլ. — « 27.—	
« իրիլ. — « 50.—	
ԿԱՂ. — սանարըլ. — 7.—	
Չէթիլն, ԵԱՂԸ. — քիլօ 1.—/1.10	
Գարա ի զիւլմ. — 32	

Отговорникъ Н. Драгулевъ
П. „Взаимнотъ“, Варна